

կապիկներին (ոռչօբեզյան), գիշատիչներին և չիխջերին.

Այդ կենդանիները բոլորն էլ կաթնասուններ են, Երկրորդ և երրորդ հատորներն էլ են նւիրած կաթնասուններին, այնպէս որ միմիայն կաթնասունների գասակարգին նւիրած են մօտ 2200 մեծաղիր երեսներ։ IV, V և VI հատորները պիտի նւիրածն թռչուններին, Հետեւալ հատորներում պէտք է նկարագրեն սողունները, երկակինցաղները և ձկները։

Այնպէս որ, նիւթի հարստութեամս տեսակէտից, Բրէմի «Ահնդանիների կեանքը» չունի իր նմանը եւրոպա-

կան գրականութեան մէջ։

Հարուստ նիւթին միանում է հեղինակի գրաւիչ պատմելու ձեւը։

Բացի բազմաթիւ հասարակ նկարներից, գրւածքում կան նաև մի քանի շքեղ խրոմոլիտոգրաֆիաներ։

Ափսոս միայն որ այդ հիմանալի գրւածքը քիչերը միայն կը կարողանան ձեռք բերել, որովհետեւ նրա գինը շատ բարձր է. ամբողջ հրատարակութիւնը կարժենակ մօտ 60 ռ.։

Ոճը պարզ ու հասարակ է, այնպէս որ գրւածքը հեշտ կարող են համարականալ նաև ոչ մասնագէտները։

Ս. Բ.

ՄՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ վարդապետի Հայոց պատմութիւնը. թարգմանեց Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց։ Ալեքսանդրապոլ, տպարան Ա. Մ. Մալլսասեանի. 1893 թ. 233 էջ, ութածալ, գինն է 60 կուէկ։

Մեր գասական մատենագրութեան դարկ աւեց Խորենացու աշխարհաբարարը, որին չաչորդեց Եղիշէի երկրորդ թարգմանութիւնը և աւսօր էլ ահա լուս է տեսել Լաստիվերտցու թարգմանութիւնը։ Անտարակուա, ցանկաւի է, որ մեր բոլոր գասական գըրածների թարգմանութիւնն ունենաւինք աշխարհիկ լեզով, բայց Կորինքը, Բիւզանդը, Փարավեյին, Աէրբէուը, Ասովիկը և ալյն թողած ձեռնամուկս լինել Լաստիվերտցու թարգմանութեան, մեզ օտարութի է թւում։ Թէն սա Ժ.Ա. դարու միակ պատմիչն է, բայց թէ իւր նշանակութիւնով և

թէ պատմական ոճով շատ երկրոգական տեղ է բռնում մեր հին գրականութեան մէջ, մանաւանդ նա աւելի մի ողբերգու վարդապետ է, քանիսկական պատմիչ, որ ամեն մի երեսիթ բացատրում է ժամանակակից։ Ների մեղքերի շատութեամբ և շարունակ ողբում է Հաճաստանի թըշւառութիւնը, անհամար, շատ անգամ անկապ և անտեղի վկանութիւններ մէջ բերելով Ա. Գր.քից, որին՝ ինչպէս իրեւում է, շատ է տեղեակ։

Գր.քի բովանդակութիւնից ամենահետաքրքրական կառուներն են Բագրատունիաց անկումը և Թոնդ-

րակեցոց աղանդին նւիրւած տեղեւ կութիւնները:

Լաստիվերտցին առհասարակ նկարագրում է իր ժամանակակից դէպքերը և ըստ երեսւթին ստուգա- տում է:

Այս պատմիչը թարգմանւած է նաև Գրանցութիւն:

Աշխարհիկ թարգմանութեանը կցած են 137 ծանօթութիւնն և չա- տուկ անունների մի ցանկ, վերջինս ամբողջովին քաղած է Վենետի- կեան բնագրից և չարմարեցրած է թարգմանութեան էջերին, որ ան- շուշտ կարեսր է ուսումնասիրութեան ժամանակ, «Ծանօթութիւնները» սա- կաւ բայցառութիւններով, աշխար- հագրական անուններին են վերա- բերում: Բայց ալդ ծանօթութիւն- ները չ-նկալի էր որ աւելի որոշ լի- նէին, օրինակ՝ բաւական չէ ասել թէ «Խլաթը Բ զնուն եան ց գաւա- ս ի քաղաքն է» (223 եր.), «Նինին՝ Մանան աղի գաւասի բերդաքա- զաք է» (223): «Ապահունի գաւառը

աշխառներից մէկն է» (208) (ընդգծումները մերն են), այլ պէտք էր ասել նաև «որ Խլաթը զտանուում է Աանակ ծովի ափին և ալն:

Թարգմանիչը նշանակել է ու. Գլը- քից քաղած գլուխների և հատւած- ների աները, որոնք պատահում են ընագրում: Թէի ինքը դրան առան- ձին արժէք չի տալիս, (առաջարան) բայց իսկապէս դա կարեոր է և մեծ դիւրութիւն կարող է տալ ձեռագիր- ների համեմատական ուսումնասիրու- թեան և բնագիրը վերականգնելուն:

Թարգմանութիւնը ընդհանրապէս բաւական աջող է, լիզուն կոկ, պարզ և ընթերցովների մեծամասնութեան համար զիւրամատչելի, այնպէս որ, եթէ վիշելու չլինենք մի քանի չնչին անհարթութիւնները, թարգմանիչը հասել է իւր նպատակին:

Թուղթը և տպագրութիւնը մա- քուր են և պարզ, գինը համեմատա- բար թանկ չէ: Տպագրական սիսալ- ները շատ են:

Գ. Վ. —